

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարությի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

**1 Ո՞ր որդն է պատկանում օղակավոր որդերի տիպին.**

- 1) եզան երիգորդը
- 2) սպիտակ պլանարիան
- 3) ներեխսը
- 4) ասկարիդը

**2 Ձկան գլխուղեղի ո՞ր քաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.**

- 1) առջևի ուղեղից
- 2) ուղեղիկից
- 3) երկարավուն ուղեղից
- 4) միջակա ուղեղից

**3 Թվարկված կենդանիներից որի՞ ճվարջիջը հարուստ չէ դեղնուցով.**

- 1) շան
- 2) աղավնու
- 3) բաղակտուցի
- 4) մողեսի

**4 Ո՞ր սնկերին է պատկանում մուկորը.**

- 1) բորբոսասնկերին
- 2) խմորասնկերին
- 3) մակարույծ սնկերին
- 4) գլխարկավոր սնկերին

**5 Ի՞նչն է բնորոշ երկաքիլավոր քույսերի մեծամասնությանը.**

- 1) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը
- 2) սերմնամաշկի դժվար անջատումը
- 3) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը
- 4) ցողունում կամքիումի շերտի առկայությունը

**6 Որո՞նք են բարձրակարգ սպորավոր քույսեր.**

- 1) ջրիմուները
- 2) ձիաձետերը
- 3) ծածկասերմերը
- 4) մերկասերմերը

7

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անոթների լայնացումը.

- 1) արյան ճնշման բարձրացմանը
- 2) արյան հոսքի արագացմանը
- 3) օրգանիզմի պաշտպանմանը զերտաքացումից
- 4) մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը

8

Ի՞նչ միացություն չի պարունակում մարդու քուքը.

- 1) պտիալին (ամիլազ)
- 2) պեպսին
- 3) լիզոնցին
- 4) մալթազ

9

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ աղբենալինի քանակի ավելացման դեպքում.

- 1) արյան մեջ նվազում է գլյուկոզի քանակությունը
- 2) լայնանում են արյունատար անոթները, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոզեն
- 3) սրտի աշխատանքը դանդաղում է, գլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում
- 4) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը

10

Ո՞ր գործընթացն է մարդու սիմպաթիկ նյարդային համակարգի դրդման արդյունք.

- 1) ստամոքսահյութի արտադրման ճնշում
- 2) աղբենալինի արտադրման ճնշում
- 3) բիբերի նեղացում
- 4) անոթազարկի դանդաղում

11

Մարդու մեծ կիսազնդերի կեղևի ո՞ր բլթերն է բաժանում կենտրոնական ակոսը.

- 1) ճակատային և քունքային
- 2) ճակատային և զագարային
- 3) զագարային և ծոծրակային
- 4) քունքային և զագարային

12

**Մարդու ո՞ր անոքներով է հոսում երակային արյուն.**

- 1) նեֆրոնի պատիճի առբերող և արտատար անոքներով
- 2) քոքային զարկերակներով և սիներակներով
- 3) քոքային զարկերակներով և երիկամներ մտնող անոքներով
- 4) քոքային երակներով և դոներակով

13

**Ինչի՞ն են նպաստում մարդու քթի խոռոչի լորձաթաղանթի արյունատար անոքները.**

- 1) արտաշնչվող օղից հոտավետ նյութերի կլանմանը
- 2) ներշնչվող օղի խոնավացմանը և մաքրմանը
- 3) ներշնչվող օղի խոնավացմանը
- 4) ներշնչվող օղի տաքացմանը

14

**Ո՞ր մարդու վերին վերջույթի կմախքի ոսկոր չէ.**

- 1) թիակոսկորը
- 2) անրակոսկորը
- 3) կրծոսկորը
- 4) բազկոսկորը

15

**Ո՞ր տիպի իմունիտետն է ձևավորվում մարդու օրգանիզմում բուժիչ շիճուկ ներարկելիս.**

- 1) բնական բնածին
- 2) արհեստական ակտիվ
- 3) արհեստական պասիվ
- 4) բնական ձեռքբերովի

16

**Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B1 -ի վերաբերյալ.**

- 1) թերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 2) ջրալույծ է, ավիտամինովի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 3) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինովի դեպքում խթանվում է ոռղովասինի սինթեզը
- 4) ավիտամինովի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է

17

Ո՞ր պրոցեսն է տեղի ունենում ինտերֆազի G<sub>2</sub> փուլում.

- 1) հոմոլոգ քրոմոսոմների տրամախաչումը
- 2) ցիտոլինեզը
- 3) բջջային կենտրոնի ցենտրիոլների կրկնապատկումը
- 4) ԴՆԹ-ի կրկնապատկումը

18

Ո՞րն է միտոզի և մեյոզի նմանությունը.

- 1) երկու բաժանումների արդյունքում էլ առաջանում են նույն թվով և քրոմոսոմային հավաքակազմով հավասար բջիջներ
- 2) երկու բաժանումների դեպքում էլ տեղի են ունենում կոնյուգացիա և կրոսինգօվեր
- 3) մեյոզի երկրորդ բաժանման անաֆազում բջջի բնեոներ են տեղափոխվում քրոմատիդները՝ ինչպես միտոզի անաֆազում
- 4) մեյոզի առաջին բաժանման անաֆազում բջջի բնեոներ են տեղափոխվում հոմոլոգ երկքրոմատիդային քրոմոսոմները՝ ինչպես միտոզի անաֆազում

19

Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) գլիկոգենը
- 2) թաղանթանյութը
- 3) խիտինը
- 4) գլյուկոզը

20

Ինչո՞վ են միտոքոնդրիումները և քլորոպլաստները տարրերվում կորիզից.

- 1) նրանցում տեղի է ունենում ԱԵՖ-ի սինթեզ
- 2) պարունակում են ՌՆԹ
- 3) պարունակում են ԴՆԹ
- 4) ունեն արտաքին և ներքին թաղանթներ

21

Բջջում որտե՞ղ է կատարվում ոիքոսումների մեծ և փոքր մասնիկների (ենթամիավորների) ձևավորումը.

- 1) միտոքոնդրիումներում, քլորոպլաստներում և վակուոլներում
- 2) բջջակենտրոնում
- 3) Գոլջիի ապարատում և էնտոպլազմային ցանցում
- 4) կորիզակում

22

Որտե՞ղ են ձևավորվում լիզոսումները.

- 1) Գոլջիկ ապարատում
- 2) պլազմային թաղանթի վրա
- 3) ոիբոսումներում
- 4) միտոքոնդրիումներում

23

Էռևարիուտ բջջում որտե՞ղ է տեղի ունենում տրանսլիպիացիայի գործընթացը.

- 1) հարթ էնդոպլազմային ցանցում
- 2) հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 3) բջջակորիզում
- 4) ոիբոսումներում

24

Ինչպե՞ս է կոչվում առանց բեղմնավորման սաղմի և սերմի զարգացումը բույսերում.

- 1) ապոմիքսիս
- 2) հետսաղմնային զարգացում
- 3) վեգետատիվ բազմացում
- 4) անսեռ բազմացում

25

Ի՞նչ հարաբերություն է ստացվում հետերոզիզուտ առանձնյակների միահիբրիդ խաչասերման արդյունքում՝ ոչ լրիվ դոմինանտության դեպքում.

- 1) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 2) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 3) 3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 4) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի

26

Ի՞նչ է գենոտիպը.

- 1) մեկ քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 2) X քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 3) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը
- 4) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը

27

Ինչպիսի՞ ֆենոտիպ կատացվի կանաչ սերմերով ոլոռի ինքնափոշոտման  
արդյունքում.

- 1) 75 % կանաչ և 25% դեղին սերմերով
- 2) 100% կանաչ սերմերով
- 3) 50 % կանաչ և 50% դեղին սերմերով
- 4) 25 % կանաչ և 75% դեղին սերմերով

28

Ո՞ր կենդանիներին է բնորոշ արական հետերոզամետությունը.

- 1) կաթնասուններին
- 2) պոչավոր երկկենցաղներին
- 3) թռչուններին
- 4) սողուններին

29

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առևտոսումներում գտնվող մուտանտ ռեցեսիվ  
գենը.

- 1) պոլիդակտիլիայի
- 2) Քլայնֆելտերի սինդրոմի
- 3) ալբինիզմի
- 4) Մարֆանի սինդրոմի

30

Ինչպե՞ս են անվանում այն փոփոխությունները, որոնք չեն ժառանգվում և  
օնտոգենեզի ընթացքում ձեռք են բերվում որպես հարմարանքներ.

- 1) մոդիֆիկացիոն
- 2) համակցական
- 3) անորոշ
- 4) մուտացիոն

31

Ո՞րն է արոմոքոֆոզ.

- 1) ֆոտոսինթեզը
- 2) միմիկրիան
- 3) նախազգուշացնող գունավորումը
- 4) հովանավորող գունավորումը

32

Առանձնյակներին մեկ պոպոլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է զլսավորը.

- 1) ազատ խաչասերման հնարավորությունը
- 2) ընդհանուր քշնամիների առկայությունը
- 3) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները
- 4) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը

33

Ի՞նչն է բնորոշ ազրուկոհամակարգերին.

- 1) խախտված է բնական հավասարակշռությունը
- 2) դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
- 3) օժտված են ինքնակարգավորմանը
- 4) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն

34

Էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) ջրի քիմիական կազմությունը
- 2) միջատներով բույսերի փոշոտումը
- 3) օրվա տևողությունը
- 4) քամու արագությունը

35

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) կոնսումենտների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 2) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 3) պրոդուցենտների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 4) ուղղուցնենուների և պրոդուցենտների կենսագանգվածի ավելացման արագությունը

36

Տեսակների միջև գործող ո՞ր փոխհարաբերությունն է օգտակար միայն մեկ տեսակի համար.

- 1) մուտուալիզմը
- 2) ամենսալիզմը
- 3) կոռպերացիան
- 4) կոմենսալիզմը

(37-38) Արտի բոլորաշրջանը տևում է 0,8 վայրկյան: Առողջ մարդու հարաբերական հաճախատի վիճակում գտնվող սրտի փորոքների կծկման տևողությունը 120 վայրկյան է:

37

Որքա՞ն է սրտի աշխատանքի տևողությունն (վրկ) այդ ընթացքում.

- 1) 40
- 2) 200
- 3) 320
- 4) 120

38

Քանի՞ վայրկյան է նախասրտերի քուլացումն այդ ընթացքում.

- 1) 120
- 2) 200
- 3) 40
- 4) 280

(39-40) Ծագանակագույն աչքերով աջիկ տղամարդու և երկնագույն աչքերով ձախիկ կնոց ամուսնությունից ծնվեց մոր ֆենոտիպով երեխա: Ծագանակագույն աչքերը և աջիկությունը պայմանավորող գեները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքերի և ձախիկության գեների նկատմամբ և ժառանգվում են որպես առոտոսոմային շղթայակցված հատկանիշներ:

39

Որքա՞ն է շագանակագույն աչքերով աջիկ երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 1/8
- 2) 1/2
- 3) 1/4
- 4) 1/16

40

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի տղամարդը.

- 1) AaBb
- 2) Aabb
- 3) AABb
- 4) AaBB

41

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Մեզի տեսակ

- A. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային
- B. լցնում է երիկամի ավագանը
- C. առաջանում է հետադարձ ներծծման արդյունքում
- D. լցնում է նեֆրոնի պատիճը
- E. առաջանում է ֆիլտրման եղանակով
- F. օրվա ընթացքում առաջանում է 150-170 լ
- G. հոսում է հավաքող խողովակով

- 1. առաջնային
- 2. երկրորդային

42

Գտնել միջատի քերանային ապարատի տիպի (նշված է աջ սյունակում) և հասուն միջատի (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հասուն միջատ

Քերանային ապարատի տիպ

- A. փայտողիլ
- B. քիթեռ
- C. խավարասեր
- D. մոծակ
- E. ծղրիդ
- F. ճպուռ
- G. մեղու

- 1. ծծող
- 2. կրծող
- 3. կրծող-ծծող
- 4. ծակող-ծծող

43

Ի՞նչ համապատասխանություն կա սաղմնային թերթիկի (նշված է աջ սյունակում) և նրանից զարգացող հյուսվածքի, օրգանի (նշված է ձախ սյունակում) միջև: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Հյուսվածք, օրգան

Սաղմնային թերթիկ

- A. աղիքի էպիթել
- B. նյարդային համակարգ
- C. խոիկների էպիթել
- D. բոքերի էպիթել
- E. ոսկրային հյուսվածք
- F. մաշկի էպիթել
- G. ատամների էմալ
- H. մկանային հյուսվածք

- 1. էնտոդերմ
- 2. էկտոդերմ
- 3. մեզոդերմ

44

Մարդու օրգանիզմի կառուցվածքի ո՞ր առանձնահատկությանը (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ո՞ր ապացույցն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. երրորդ կոպի մնացորդ
- B. մաշկային մկաններ
- C. պոչի առկայություն
- D. կույր աղիքի որդանման ելուստ
- E. պոչուկ
- F. դեմքի խիտ մազածածկույթ
- G. լրացուցիչ պտուկներ

- 1. ատավիզմ
- 2. ոռողիմնեստ

45

Փոփոխականության ո՞ր ձևին (նշված է աջ սյունակում) ո՞ր օրինակն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակ

Փոփոխականության ձև

- A. Քիզիկական մեծ քեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ
  - B. Առկլեռոտիղների մեկ գույգի փոխարինում
  - C. հապլոիդիա
  - D. պոլիպետիդային շղթայի ամինաքրվի փոխարինում
  - E. բեղմնավորման ժամանակ զամետների պատահական զուգակցում
  - F. աշնանը տերևների գույնի փոփոխություն
  - G. տրիսոմիա
- 1. գենային մուտացիա
  - 2. գենոմային մուտացիա
  - 3. համակցական փոփոխականություն
  - 4. ֆենոտիպային փոփոխականություն

46

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

- 1. արյան պլազմայի մեջ քրոմբինի արտազատում
- 2. արյունատար անոթի պատի վնասում
- 3. քրոմբի առաջացում
- 4. ֆիբրինոգենի քնափոխում
- 5. քրոմբոցիտների քայլացում
- 6. ֆիբրինի առաջացում
- 7. քրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին

47

Նշել պայմանական ռեֆլեքսի ձևակորման փուլերի ճիշտ հաջորդականությունը:

- 1. անտարբեր գրգռիչի վերածում պայմանական գրգռիչի
- 2. ամրապնդում
- 3. ժամանակավոր կապի առաջացում
- 4. ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի և անտարբեր գրգռիչի զուգակցում
- 5. պայմանական ռեֆլեքսի դրսևորում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ:

1. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
2. ցանցաթաղանթի ընկալչական բջիջների գրգռում
3. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
4. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
5. տեսողական զգայության ձևավորում
6. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
7. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով

49

Նշել կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը.

1. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում
2. սպիտակուցների ներմուծում օրգանիզմ
3. պեպտիդային կապերի առաջացում
4. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայլայում
5. ջրածնային կապերի առաջացում
6. ամինաթթուների ներմուծում բջիջ
7. պեպտիդային կապերի քայլայում
8. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում
9. ջրածնային կապերի քայլայում

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական քաղմացման ժամանակ:

1. փոշոտում
2. փոշեխողովակի առաջացում
3. սերմի առաջացում
4. սպերմիումի և ձվաբջջի միաձուլում
5. միկրոսպորի առաջացում
6. փոշեխողովակի ներթափանցում սաղմնապարկ
7. զեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում

51

**Նշել սերմնարանում գամետների առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը:**

1. սպերմատոզոֆիդների ձևավորում
2. տրամախաչում
3. հոմոլոգ քրոմոսոմների տարամիտում
4. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
5. դիպլոիդ բջիջների բաժանում՝ դիպլոիդ բջիջների առաջացմամբ
6. երկու հապլոիդ բջիջների առաջացում

52

**Նշել գորտի օրգանիզմ օղի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների ճիշտ հաջորդականությունը.**

1. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է
2. օղը թոքերից դուրս է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
3. օղը քրանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
4. օղը մղվում է դեպի թոքերը
5. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
6. փակվում են քրանցքերի փականները
7. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է

53

**Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. հողաբափիկ ինֆուզորիայի բազմացման ընթացքում կարևոր դեր է կատարում փոքր կորիզը
2. մակաբույծ ինֆուզորիաներից է բալանտիդիումը
3. հողաբափիկ ինֆուզորիան շարժվում է կեղծ ոտքերի միջոցով
4. հողաբափիկ ինֆուզորիայի բջջաբերանին հաջորդում է բջջակլանը
5. սննդի չմարսված մնացորդները հողաբափիկ ինֆուզորիայի մարմնից դուրս են գալիս արտազատող անցքով
6. հողաբափիկ ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով, որի ժամանակ տեղի է ունենում կոնյուգացիա

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. կապտականաչ ջրիմուները բազմանում են երկու մասի կիսվելով
2. բակտերիաների ԴՆԹ-ն սպիտակուցների մոլեկուլների հետ համալիրներ է առաջացնում
3. նիտրիֆիկացնող բակտերիաների մի խումբն օգտագործում է ազոտային թթուն ազոտական թթվի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան
4. կապտականաչ ջրիմուները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի կլանումով
5. բակտերիաներում ֆոտոսինթետիկ գունակները հաճախ կապված են լինում պլազմային բաղանթին
6. կապտականաչ ջրիմուներն ունեն քլորոպլաստներ, և ֆոտոսինթեզի ընթացքում ջրի մոլեկուլներն ենթարկվում են ֆոտոլիզի
7. բակտերիաների բջջապատը կազմված է սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. Ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան մեջ գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն
2. ստամոքսում տարբերում են օղակադիր, երկայնակի, թեք մկաններ
3. աղաքաղաքություն և աղիքահյութը ստեղծում են թթվային միջավայր, որն ակտիվացնում է աղիներում գործող մարսողական ֆերմենտները
4. հաստ աղու մանրէների ազդեցության տակ մարսվում են դեռևս չմարսված բուսական, մասամբ նաև կենդանական ծագում ունեցող ճարպերը և բարդ ածխաջրերը
5. կլլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակուկորդով
6. ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը միջին ականջի խոռոչի հետ
7. բարակ աղիները բաժանվում են երեք մասի՝ տասներկումատնյա աղի, զստաղի և խթաղի

56

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- կենսածին նյութն իր մեջ ներառում է օվկիանոսի ջրերը, հողը, կրային ապարները, քարածուխը
- ալոպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում
- սարացենիան զիշատիչ բույս է
- կենսացենոզով գրաղեցված տարածքն իրեն բնորոշ պայմանների և գործոնների հետ միասին կոչվում է բիոտոպ
- կոնսումենտներին բնորոշ է սնուցման հետերոտրոֆ եղանակը
- լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուկցեսիայի օրինակ

57

## Նշել նարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում
- սեղանաձև մկանը կծկվում է թիակներն իրար մոտեցնելիս և գլուխը դեալի հետ թեքելիս
- կրծքավանդակի ուլուերը միացած են միմյանց շարժուն, կիսաշարժուն միացումներով
- գոտկային և սրբանային ողերի սերտաճումը նպաստում է հենարանային գործառույթի իրականացմանը
- ողնաշարի կրծքային բաժնի ողի ելուստները դուրս են գալիս աղեղից
- սրբուկրի ողերը ձևավորում են կիսաշարժուն միացումներ

58

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- համաձայն Թ. Մորգանի օրենքի՝ պտղաճանճի երկիետերոզիզոս էզի և ռեցեսիվ հատկանիշներով արոտի խաչասերման արդյունքում սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
- երկիետերոզիզոս առանձնյակների խաչասերման արդյունքում, գույգ ալելիների ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ
- Մենդելի առաջին օրենքը գեների անկախ բաշխման օրենքն է
- Aabb գենոտիպով առանձնյակները կառաջացնեն 2 տիպի զամետներ
- ծղրիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտողիլի արուների սոմատիկ բջիջներն ունեն մեկ սեռական քրոմոսոմ
- կատուների մարմնի գունավորումը X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է

(59-60) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 36 մոլ  $\text{CO}_2$  և 270 մոլ  $\text{H}_2\text{O}$ :  
1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200  
կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

59

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը անթթվածին փուլում:

60

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը թթվածնային փուլում:

(61-62) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածում U/Q քանակական հարաբերությունը հավասար է 2,1-ի:

61

Քանի՞ նուկլեոտիդներից է կազմված տվյալ հատվածը, եթե դրանում գուանինային մնացորդների քանակը հավասար է 2400-ի:

62

Քանի՞ ամինաթթվից կազմված սպիտակուց է կողավորում ԴՆԹ-ի այդ հատվածը:

(63-64) Ֆուտոսինթեզի պրոցեսում կլանվել է 88 կգ CO<sub>2</sub>: 1 մոլ զազր գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

63

Զանի՞ լիտր բթվածին է արտադրվել այդ ընթացքում:

64

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

65

Տարվա ընթացքում արեգակնային ճառագայթման էներգիայի հոսքը մարզագետին կազմել է  $8 \cdot 10^{10}$  կՋ/հա: Մեկ հեկտար մարզագետնի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 20000 կգ խոտ: Առաջնային արտադրանքի յուրաքանչյուր 1 գ-ում կուտակվում է մոտ 30 կՋ: Արեգակնային էներգիայի քանի<sup>o</sup> տոկոսն է յուրացնում մարզագետինք: Պատասխանը բազմապատկել 100-ով:

66

Քանի<sup>o</sup> լիտր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում 8 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 1,5 անգամ, շնչառական ծավալն աճում է 1,6 անգամ, իսկ յուրացվող թթվածնի ծավալն ավելանում է 25 %-ով: Ընդունել, որ մարդու հարաբերական հանգստի վիճակում արթուն ժամանակ 1 րոպեում կատարում է 20 շնչառական շարժում:

- (67-68) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսը 2 մ<sup>2</sup> է, որից գոլորշիացել է 400 գրամ քրտինք:

67

Քանի՞ Չոռվ էներգիա է հեռացել մաշկի 1 մմ<sup>2</sup> մակերևույթից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

68

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմահաղորդմամբ:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի մարմինը կազմված է ՈՆԹ-ի մեկ մոլեկուլ պարունակող գլիկուլից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից
2. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը նման է սնամեջ գլանի, որի պատր կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ ներսում տեղափորված է ՈՆԹ-ի մեկ մոլեկուլ
3. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը գնդիկային տեսքով կառուց է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը ձողաձև է
4. ֆագերն այնպիսի վիրուսներ են, որոնք բնակվում և բազմանում են բույսերի քջիջներում
5. հեպատիտը, անգինան, սիֆիլիսը, թոքախտը, սիբիրախտը, էնցեֆալիտը վիրուսային հիվանդություններ են
6. այն երևույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. աջ թոքը կազմված է երեք բլթերից, ձախը՝ երկու
2. օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է թոքերի կենսական տարրություն
3. թոքամզի թոքային թաղանթը պատում է կրծքավանդակի պատերը ներսից
4. կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, երբ մթնոլորտային օդը թափանցում է թոքեր
5. թոքերը պատված են հարք մկանային հյուսվածքի երկշերտ թաղանթով, որոնք նպաստում են թոքերի կծկմանը և ընդարձակմանը
6. շնչառական ծավալն օդի այն ծավալն է, որը թոքեր է անցնում մեկ հանգիստ ներշնչման ժամանակ